

ՄՇԽԿ

ՀԱՐԱՐ ՄԱՅԻՍԻ 8

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվաը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Ցայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով.
Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

«ՄՇԽԿ» ԼՐԱԳԻՐԸ

Մայիսի 1-ից մինչև տարվայ վերջը
կարժենայ 60թ ռուբլի:

Գինը. Тифлисть, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
մայիսի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղորօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագիր առաքումը
չընդհատվի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունում:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻՑԻՆ

Լաօեանի շրջակայքում.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՆԸ. Նամակ խմբագրութեան. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԸ. Պատերազմի
շուրջը.—ՀՆԱՍԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՆԵՐԸ:

ԼԱՅՈՒՆԻ ՇՐՋԱԿԱՅԻՆԻՑ

Ռուսաց հեռագրական գործակալու-
թիւնը հաղորդեց մի շարք տեղեկութիւն-
ներ եւրոպական գործերի շարժումների
մասին Մանչեսթրի զանազան շրջաննե-
րում: «Рыс. Сл.» լրագրի աշխատակից
Նեմիրովիչ-Դանիլին, որ ներկայումս զը-
նակում է Լաօեանում, հեռագրում է, թէ
«Եւրոպական հարաւային գործը յամբարայլ
շարժումներով առաջ է խաղում դէպի
Պայէշ-Լաօեան, որ կարգին է նրանց
գործողութիւնների կենտրոնը: Արեւելք է,
որ եւրոպացիները ձգտում են կապ և
զուգընթացութիւն հաստատել իրանց պա-
հաստագործերի հետ: Եւրոպացիների գոր-
քերը զանազան են Լաօեանից 60 վերստ
հեռավորութեան վրա: Լաօեանի շուրջը
զանազան սթերեոների կոյտեր»:

Այդ հեռագիրը առիթ է տալիս լրագրին
անխաղաղ, պատրաստվում է մեծ դիմա-
դրութեան: Այստեղ հակառակորդը կը
գտնէ մի «երկրորդ Պիլլան», այն տար-
բերութեամբ սակայն, որ թիւրքերը ան-
կարող եղան վերել Օսման փաշային: Իսկ
Լաօեանի գործողութիւնները ժամանակ,
միւս ամբողջ կէտում, այն է Մուկէնում,
կը ժողովին այն պոքր, որոնց վերա-
պահված կը լինի հասցնելու եւրոպացի-
ներին ծանր հարուածներ: Պէտք է ի
նկատի ունենալ, որ մայիսի վերջին կամ
յունիսի սկզբին կը սկսվի ընդհանուր
անձրևների շրջանը, ներկայացնելով այդ
պիսով մի ընդհանուր զինակից ռուսաց գոր-
քերին: Իսկ եւրոպական գործին մնում է
շտապել իր գործերը կարգադրելու մինչև
անձրևների սկսվելը:

Այսօրվայ հեռագիրը, որ ուղարկված է
Մուկէնից, յայտնում է, որ եւրոպական
գործի առաջնորդացութիւնը կանգ է ա-
ռել և եւրոպական առաջադարձ գնդերը
յետ են քաշվել:

Պատրաստութիւնները շարունակվում
են երկու կողմից եռանդուն կերպով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԸ

ՆԱՍԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 6-ին
Խոջուրում եւ տեղ տալ հետեւեւ տողերին:
Վերջին տարիներ Պարսկաստանի զանազան բաղա-
ներից դիմումներ են լինում, թէ Վալակըն և թէ ինձ,
զանազան հայ դպրոցների և հաստատութիւնների կող-
մից, խնդրելով ընթերցանութեան համար գրքեր ու-
ղարկել և նպաստել գրադարան-ընթերցարանների դա-
րացման գործին: Մի քանի ժամանակ առաջ եւս ես
ստացայ թուրքի «Արտիկան» գրադարանի վարչութիւ-
նից մի նամակ, որով վարչութիւնը, յայտնելով, թէ
«Արտիկան» գրադարանը գտնվում է ամենաթշուառ վի-

ճակի մէջ և դուրի գրեթէ բոլոր հարկերն հեղինակու-
թիւններից» խնդրում է ինձ գրքեր ուղարկել: Վար-
չութիւնը մասնագրոյց է լինում այն հանգամանքի վրա,
որ պարսկական երկրաստորները, վերջացնելով իրանց
ուսումը տեղական դպրոցներում, որոնք միայն տար-
բական կրթութիւն են տալիս, պէտք է իրանց ուսումը
լրացնեն իրենց կրթութեամբ, իսկ այդ հնարաւոր է
միայն ընթերցարան-գրադարանների միջոցով, որոնք,
գրադարանը, շատ անախաճներ վիճակի մէջ են
գտնվում:

Այդ առիթով պարտք եմ համարում յայտնել, թէ
«Արտիկան» գրադարանի վարչութեան և թէ Պարսկա-
ստանի հայոց միւս հաստատութիւններին ու գրադա-
րաններին հետեւելը:

Ի՞նչ երկու տարի առաջ ես ուղարկեցի թուրքի
Հայոց հայրեր ընթերցարանի ընկերութեան վարչութեան
և Սպարանի Նոր-Ջուղայի սրբազան առաջնորդին մի
քանի հարկեր կտոր գրքեր.—«Մեղծեր» (Ահարոնեանի),
«Հայրենի հող» (Հ. Բորչոյի), «Ջնուր-Քուշան» (Շահ-
բաբի), «Փոփոխվել վերջին օրերը» (Հիւսոսեանի), «Ուրա-
նիա» (Փարսիսեանի), որ նուրիւ էին պ. պ. Մ. Մէ-
լիք-Աղաբեկի, Յովսէփ Տիգրանեանի, Եղոր Ջուրա-
բեանի և Միսա Սուլիսեանի, Գառնար Տէր-Մարգա-
րեանի այն նպատակով, որ այդ գրքերը բաժանվին
Առաքարականի և Նոր-Ջուղայի թեմերի հայ հասո-
րակութեան և դպրոցական գրադարաններին, որ որ
կարելի լինի, տալով ամեն մի գրադարանի և ընթեր-
ցարանի մի քանի օրինակ ամեն մի գրքից:

Երբեք ժամանակներ հետեւել անձինք դարձաւ
նորի նպատակով ուղարկեցին ինձ բազմաթիւ գրքեր,
այն է 1) սիւրիկ Հայկառոյ Մարտիրոսեան 150 ռուբ-
լով գրքեր, զիւրաւորակէ պ. Ս. Ա. Ահարոնեանի, Հ. Ա-
ռաբեկեանի «Հանրամատչելի գրադարանի» աշխատու-
թիւններից և ուրիշ զանազան գրքեր, գնված «Դուռ-
տներից» գրադարանից, 2) պ. Ս. Մէլիք-Աղաբեանի
307 ռ. 50 կոպեկի գրքեր, զիւրաւորակէ Ս. Թառա-
հանի «Երկրի երկնաստոր պատկերագրող աշխատու-
թիւններից», Յով. Թումանեանի «Ժամանակագրութիւն»
հերթ-ից, Գ. Արծրունու աշխատութիւնների 1 հատո-
ւոյց, 3. Աղաբեկեանի «Գաղթական» գրքակից, 3.
Նապոլեոնի գրքերից, Վրձինի «Մանրանկարներ»-ից,
Ս. Ահարոնեանի «Ժողովրդական» գրքից, Հ. Առա-
բեկեանի «Հանրամատչելի գրադարանից», Լեօի գր-
քերից և ուրիշ այլ գրքեր, գնված «Դուռտներից»
գրադարանից: 3) պ. Գ. Իւզաբեանի, պ.
Ս. Մէլիք-Աղաբեկի միջոցով, եւ. Աղաբեկեանի ըն-
տարակցած «Աղաբեկեանի Հանդէսի» մի քանի տարվայ
գրքերից.—75 ռուբլով: 4) Բորչոյի և Բուրչոյեանի իր 10
աշխատութիւններից 100 օրինակ, 18 ռուբլով: 5) սիւրի-
կ Ջաբել իր «Մեր էթնոգրաֆիկ դպրոցները» հատար-
կութիւնից 20 գրքից.—2 ռուբլով: Շուտով ես այդ նուե-
րերի, ներկայումս եւս իմ տրամադրութեան տակ ունեմ
մօտ 1050 կտոր գրքեր, 255 անուն:

Այդ գրքերը եւ բաժանել եմ երկու հատար մասի,
մի մասը ուղարկեցի թուրքի «Արտիկան» գրադար-
անին և թուրքի Հայոց հայրեր ընթերցարանի ընկե-
րութեան, իսկ միւս մասը Սպարանի, Նոր-Ջուղայի հա-
յոց առաջնորդարանը, Բաղրամ Գ. Վարդապետեանից,
խնդրելով որ նրանք ձեռքարար հայկական Առաքարա-
կանի և Նոր-Ջուղայի թեմերում գտնվող ընթերցա-
րան-գրադարաններին և դպրոցական մատենադարան-
ներին մի քանի օրինակ ամեն մի գրքից, իսկ առե-
ւորները վաճառեն յօդուտ տղային հաստատութիւն-
ներին:

Այդ պատճառով առաջարկում եմ Պարսկաստանի
բոլոր աղաջայն հաստատութիւններին, որոնք դիմել են
ինձ կամ պէտք ունեն գրքերի, դիմել պատշաճ ուղ-
ղակի թուրքի Հայոց հայրեր ընթերցարանի ընկերու-
թեան Առաքարականի թեմին համար, և Բաղրամ Գ.
Վարդապետեանից, Նոր-Ջուղայի թեմին համար, բացա-
րութեամբ կնքվելի և Բաղր Գրադարանների, որոնք
կարող են ուղղակի ինձ դիմել և որոնց համար պահած
ունեմ գրքերի մի մասը:

Մի և նորի ժամանակ պարտք եմ համարում հրապա-
րակով շնորհակալութեան յայտնել տ. Հ. Մարտիրո-
սեանին, Իսախան Իւզաբեանին, Բորչոյեանի Բուրչո-
յեանից, Ար. Քալանթարին, սիւրիկ Ջաբելին և մա-
նուսեան պ. Ս. Մէլիք-Աղաբեկեանից, (որ հայկականի
և գրքերի մեծագոյն մասը, մօտ 300 ռուբլով) իրանց
խնդրանքական հոգեւորներին համար:

Հ. Առաբեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՐԱԳՐԸ

Հինգշաբթի, մայիսի 6-ին, Թաղաւոր Կալս-
րի ծննդեան օրը, Թիֆլիսի Ալեքսանդր-Նեվսկի
կիյ տաճարում պատարագից յետոյ կատար-
վեց մաղանք, որին ներկայ էին ամբողջ գե-
ներալիտետը, բարձրատիման անձեր և բազ-
մաթիւ հասարակութիւն: Մաղանքից յետոյ
տեղի ունեցաւ Արեւնայեան սարից թիւղնո-
թաճարութիւն 21 հարուածով: Մաղանքներ կա-
տարվեցին Վանքի մայր եկեղեցում և ուրիշ զա-
ւանթութիւնների աղօթարաններում: Երեկոյեան
ճրագալաւորութիւն կար բոլորքում:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են,
որ մօտ ապագայում վերադառնան միւսիստու-
թեան կազմակերպութիւնը փոփոխութեան
կենթարկելով, շտաբը պէտք է դառնայ մի ինք-
նուրոյն և բարձրագոյն հաստատութիւն:

Հաղորդակցութեան ճանապարհների միւսիս-
տը, կողմաբէ երկաթուղիների վրա է ու-
ղարկել ինժեներ Գրիգորիան, որպէս զի նա
հետազոտութիւններ անէ Թիֆլիս-Կարսի գծի
վրա: Հետազոտութիւնների նպատակն է այդ
գծի լինային մասերում գնացքները շարժել
երեքտարեան ուժով և այդ նպատակով կա-
ռուցումներ ձեռնարկել: Երեքտարեան անհրա-
ժեշտ ուժը ձեռք բերելու համար պէտք է
օգտվել Փամբակի դեպի հոսանքից և նրա
շրջվածքներից:

Բազուկի պատ-հեռագրական վարչութիւնը,
ինչպէս յայտնում են այստեղի լրագիրները,
յայտարարել է, որ բացի Աստրաքաղից, Մե-
շեղից, Ռաշտից և Թէրբուլից, այժմ հեռագրա-
կան հաղորդակցութեան համար բացվել են
Թաւրիզը և Ուրմիան էլ: Ի հարկէ սա այն
կատարվում է ընդհանրապէս ամբողջ առտա-
սանմանի հետ—լատինական տառերով գրված
հեռագիրներից—մի Պարսկաստանի մէջված
6 քաղաքները կարելի է հեռագրի ուղարկել
ուսումնէն լեզուով, ինչպէս ներքին հեռագրի:
Իսկ անհայտ յարմարութիւն է մի երկրի հա-
մար, միայն բառագիրը չափազանց թանկ է,
համեմատելով կարիք ու տարածութեան հետ:

Սկզբունքով վճարված է Բրիտանից մինչև
Պետերբուրգ նաւթանցք շինել 382 վերստ եր-
կարութեամբ, որը պահանջելու է 20 միլիոն
րուբլի ծախք:

Թիֆլիսում ապրիլի 26-ից մինչև մայիսի
3-ը նկատված են վարակիչ հիւանդութիւն-
ների 23 դէպքեր, որոնցից փոքր տիֆից եղել
է 1 դէպք, ծաղիկից 6, կարմրութիւնից 6, բու-
թէշից 4 և դիֆթերիայից 4:

Թիֆլիսի պ. նահանգապետը հաստատել է
մի տաղան Թիֆլիսի համար: Տաւարի մի
առաջին տեսակը նշանակված է 12 կ., երկ-
րորդը 11 կոպեկ, երրորդը 8 կ., սուրկին 18 կ.,
ոչխարին 12 կոպեկ:

Մայիսի 3-ին ժամանակաւոր հիւանդանո-
ցում եղել են 23 հիւանդներ, որոնցից ջու-
թէշով 8 հոգի, ծաղիկով 8 և դիֆթերիայով 7:
Կանանց հիւանդանոցում եղել են 22 հոգի,
այդտ տեղի կան 33: Հոգեկան հիւանդների
լաժանմունքում եղել են 50 հոգի:

Անոնիմ ընկերութիւնը յայտնում է Թիֆ-
լիսի քաղաքային վարչութեան, որ ամսին
10-ից նա կը սկսէ էլեքտրական բարձրակի հա-
մար բէշանի դիմ յօրովինակի պրօպագան-
տում:

Ապրիլի 29-ին Չալալ-Օղլու, իր սեփա-
կան տան մէջ սպանվել է մի քանի անձերի
ձեռքով Արազ Բեկարեան Շաւրթեանը: Սպա-
նդներն անյայտ են:

Ներկայ ժամանակ ընկերակցութիւնների,
սինդիկատների ու միութիւնների ժամանակ
է: Միւսում են արհեստաւորները կազմում
արդիւնագործող ընկերութիւններ. միւսում
են սպանդները կազմում սպառողական
ընկերութիւններ և այլն: Վարուց է արդէն
վարչապետ և Օրենսդրական ակնդէն-
սների, արժաթի և ոսկի իրերի վաճա-
րականներն ունեն իրանց դաշնակցութիւնը
կամ սինդիկատները Այժմ «ԲԵՅԵ» լրագիրը
հաղորդում է, որ այդ երկու խոշոր սինդի-
կատները բանակցութեան են մտել և ուղում
են ձուլվել իրանց հետ ձգել և մի ուրիշ ու-
կեղծառնների ու կազմի մէջ հասն «ոսկեկա-

ճառների համառոտական սինդիկատ» ի հարկէ
այդ սինդիկատի նպատակը չէ յաճախորդնե-
րի կամ հասարակութեան օգուտը—մի նրա
միակ նպատակը լինելու է պահել ոսկեղէնի և
ակնեղէնի գները որոշ, իրանց ուղած բարձ-
րութեան վրա:

ՎԱՐՇԱՎԱՅԻՑ մեզ հաղորդում են հետեւե-
լը. «Լիովի (Գալիցիայում) համայնաբանում
հին և նոր հայկական լեզուի ամբիօնի պրօ-
ֆէսոր է նշանակված հայր Կանօնիկ Բողդան
Դաւիթովիչ»:

—

ԳԱՆՁԱՅԻՑ գիւղական գործերի ատենաւում
մօտ օրերս վճարվել է իրաւաբանական տեսա-
կետից մի շատ հետաքրքիր գործ՝ Շուշու գա-
ւառի Լալարիլէնդ գիւղի հասարակութեան
և նրանց կալուածատէր Արարիանովի միջև:
Վիճելի հարցը հետեւեալն էր. կալուածատէր
Արարիանովը 1871 թ-ի ուսումնայա գրածօտա-
յի և հաշտարար միջնորդի մի յատուկ արձանա-
գրութեան համաձայն՝ Լալարիլէնդի բնակիչ-
ներին թողել է 340 դեստատին մի անտառա-
յին հողաբաժին: Գիւղացիները՝ հասկանալով
թէ այդ անտառը որքան մեծ նշանակութիւն
պէտք է ունենայ իրանց համար ապագայում՝
30 տարեկան ընթացքում աչքի լոյսի նման
պահպանում և խնամում էին, որի պատճառով
և նախկին ջնչին մացառուտը դառել է այժմ
մի խոշոր ու սաղարթախիտ անտառ: Եւ ան-
հրա այժմ գիւղացիների օգտվելու ժամանակը
հասել է, կալուածատէրը խնդրել է ներկայաց-
նում հաշտարար միջնորդին և պնդում, որ այդ
անտառը պատկանում է իրան և չէ մտնում
ամենին գիւղացիների տրվելից հողաբա-
ժինների մէջ: Հաշտարար միջնորդը բաւա-
րարութիւն է տալիս կալուածատիրոջը և
հարցը վճարում նրա օգտին, թողնելով գիւղա-
ցիներին իրաւունք բողոքելու իր վճիռի դէմ
գիւղական գործերի ատենաւում: Գիւղացիներն
իր ժամանակին բողոքել տուին: Իսկ մինչև
այդ բողոքի վերջնական լուծումը՝ ոչ գիւղա-
ցիները, ոչ էլ կալուածատէրը իրաւունք չը
պէտք է ունենան՝ օրէնքի համաձայն՝ փայտ
կտրել այդ անտառից: Բայց չը նայելով օրէն-
քի այդ պարզ մօրին, կալուածատէր Արար-
իանովը ուղարկել է իր մարդկանց այդ ան-
տառը իր հատարամատար Սարիվալինսկու
առաջնորդութեամբ, որոնք և սկսել են կոտո-
րել անտառը: Կալուածատիրոջ կողմից այդ
պայօրինի վարմունքը բողոք և դիմադրութիւն
առաջացրեց Լալարիլէնդի բնակիչներին մէջ
մասի կողմից: Այդ դիմադրութեան համար
գիւղացիներից մօտ 70 հոգի (20-ը կին) են-
թարկվեցին բնական պատասխանատուութեան,
որոնցից 12 հոգի մինչև այժմ էլ բանտարկ-
ված են Շուշու բանտում: Այն ժամանակ երբ
կատարվում էր նախնական ընտելութիւն այդ
դիմադրութեան գործի առիթով, նոր ժամա-
նակի ներկայ տարվայ ապրիլի 24-ին գիւղա-
կան գործերի ատենաւում ընկնելով զայրաւո-
րեցիւնների բողոքը՝ հաշտարար միջնորդի
վճիռ դէմ, և լսելով երկու վիճող կողմերի
երկուեւայ հաւատարմատարների (գիւղացինե-
րի կողմից պ. Ռօյախանի, իսկ կալուածատի-
րոջ կողմից՝ Ջիւրիլեանովի) բացատրութիւնը—
ատենաւում որոշեց փոխել հաշտարար միջնոր-
դի վճիռն այդ գործի մասին, ճանաչել գիւ-
ղացիներին իրեն այդ անտառից օգտվելու և կալ-
գա գրելու իրաւունքը՝ համաձայն Շուշու
բաժնի հաշտարար միջնորդի այդ անտառա-
բաժնին վերաբերեալ պրօտօկոլի: Այդ վճիռը
իր աւելւած է տալիս գիւղացիներին ոչ միայն
պահանջել Արարիանովից իրանց կրած վնաս-
ները, այլ և գիւղացիներից ցոյց տուած դի-
մադրութեան համար բացված քրէական դա-
տի ընդհատումը—համաձայն Կառավարիչ Սե-
նատի 1903 թ-ի յունիսի 3-ի Մայիսյան հե-
ղած գործի առիթով կայացրած վճիռ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻՄԱՆՈՒՄ ԵՐԱՐԵՐ

Մուկոգի մօս: «Morning Post» լրագրի գինւորական աշխատակիցը գրում է. «Ռուսաց զինաւոր բանակը այժմ տեղաւորված է Մուկոգիի և Լեւոսեանի մէջ: Գինեւրալ Կուբուստովը, ինչպէս կարելի է դատել հետազոտութիւնից, ըստ երևոյթի, կենտրոնացած է, որ իր բանակը բաւականաչափ զօրեղ չէ, որպէս զի հէնց այժմ կռիւ տայ հապօնացիներին, և մը-տադիր է նախանշել զէպի խարբին: Սակայն զօրծնականապէս հնարաւոր է իրականացնել այդ մտադրութիւնը: Դրա համար զօրքերին հարկաւոր է անցնել մօտ 600 կիլօմետր տա-րածութիւն: Բանակը Լեւոսեանում և Մուկոգիում, հաւանականօրէն, բաղկացած է 75 հազար մարդուց: Գինեւրալը պէտք է սպասէ մանր զօրաբաժինների վերադարձին և յետոյ սկսէ նահանջուել: Բացի դրանից գինեւրալ Կուբուստովի կամ մի ուրիշ որ և է հապօնական կօրպուսի զօրքերը կարող են հասնել Լեւոսեանին երկու շաբթից յետոյ: Գինեւրալ Կուբուստովը, պարզ է, չէ կարող տանել իր զօրքերը երկաթուղով: Եթէ նոյն իսկ հնարաւոր լինի օրը 12 գնացք ուղարկել, հաշուելով ամենամեծ թիւը, բանակը յետ ուղարկե-լու համար հարկաւոր կը լինի երեքից չորս շաբաթ: Այսպիսով հապօնացիները ունեն ժա-մանակ հասնելու ռուսներին, երբ Լեւոսեա-նում կը մնայ նրանց մի մասը միայն և ահա-զին ֆլաս հասցնել նրանց: Միակ հնարաւոր ծրագիրը—ճանապարհը ոտքով անցնելն է, բայց 600 կիլօմետր գնալը դժուար ձեռնար-կութիւն է: Պէտք է իշխել, որ բացի զօրքերից պէտք կը լինէր տանել և ամեն տեսակ պա-շարների ահազին բանակութիւն, որ վերջին ամիսներում հաւաքված է Մուկոգիում և Լեւոսեանում: Բայց կարող է գինեւրալ Կուբուստովին մնալ այնտեղ, ուր այժմ տեղաւոր-ված է նրա բանակը: 75 հազարանոց զօրքը հաւաքին միջոցներ է պահանջում կերակրելու համար: Մի կամ երկու շաբթում նա ոչնչաց-նում է բոլոր պաշարները, որ կարելի է գըտ-նել շրջականերում,—ի հարկէ, եթէ զօրքը շատ չէ ցրված. բայց եթէ զօրքերը չեն տե-ղաւորուած խիտ առ խիտ, նրանք պատրաստ չեն պատերազմի, իսկ եթէ խիտ առ խիտ է տեղաւորված, ռուսները պակասութիւնը շու-տով պիտի զգացվի: Ռուսաց բանակը կենտ-րոնացած է Մուկոգիի մօտ արդէն երեք ամ-սից ի վեր: Նա, ի հարկէ, արդէն ոչնչացրել է շրջակայ տեղերի ռուսները պաշարները: Ռուսները պիտի տեղ հասցնվի երկաթուղով և այս պատճառով չէ կարող զօրքերի մեծ փո-խադրութիւն տեղի ունենալ: Մուկոգիից դէ-պի հիւսիս մի քանի կիլօմետր տեղ երկաթուղ-ու փչացնելը բոլորովին կը դադարեցնէր ռուսաց զօրքին պաշար հասցնելը, իսկ եթէ նա կը վճռէ նախանշել զէպի հիւսիս, նրա շարժողութիւնը չէ կարող այնպէս արագ կա-տարվել, որ հապօնական զօրախնները չը հասնէին նրա մասերի ետևից: (С. Пет. Вѣд.)

Նաղապարհի քիւրօի դիմաւոր: Նաղապար- թեան միջադպարի բերօս Բերնում, ինչպէս հաղորդում է «Berliner Tageblatt» լրագիրը, դիմաց ռուսական և հապօնական արտաքին զօրքերի միմիկտներին մի ուղիքով, որի մէջ ապացուցանում է, որ ներկայ պատե-րազմը սպառնում է երկու պատերազմող պե-տութիւնների կենսական և էական շահերին: Նոյն իսկ այն երկիրների վրա, որոնք շատ հեռու են գտնվում պատերազմական բեմից, պատերազմը արդէն այժմից չափազանց ան-բարեխաղող ազդեցութիւն է գործում: Նաղա-պարթեան բերօս խաղաղութեան բոլոր բարե-կամների և ազգերի համարաշխութեան գաղա-փարի կողմնակիցների անունից խնդրում է երկու պատերազմող կողմերը չը մերժել այն խաղաղապարկական միջոցները, որոնցով կա-րելի է խուսափել արեւմտահայկութիւնից և պահպանել արժանապատեթիւնը: Հաագայի գաղափարութեան 8 կէտը որոշում է, որ եր-կու չէզոք պետութիւններ կարող են միջնորդ հանդիսանալ պատերազմի ժամանակ: Բերնում թախանձում է ռուսաց և հապօնական կառա-վարութիւնները փորձել ընդհարումը խաղաղ միջոցներով լուծել: Արևի արդէն բաւականա-չափ է թափվել: Այս ուղիքով պատերազմը, ուղարկված են այն բոլոր պետութիւններին, որոնք ստորագրել են Հաագայի գաղափարը: (Спб. Вѣд.):

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՅՈՑ

6 մայիսի

ԿՐԵՄԼԵՆՈՒԳ: Մայիսի 5-ին, վաղ առաւօ-տեան, քաղաքում նկատվում էր անսովոր շար-ժումն քաղաքի փողոցներում: Արքայական զե-նացքին սպասելով հոծ խմբերով խռնված էին բոլոր մայիսերը. քաղաքը զարդարված էր դե-րօշակներով, Թագաւոր Կայսրի պատկերներով, վիզգիներով և լուսանցներով. տները պնշված են զօրգեղով, կերպաներով և ծաղիկներով: Վօկզալում Նորին Մեծութեան դիմաւորում են ազնուականութեան, գեմաւոյօյի, քաղաքի, մէշ-յանները և գիւղական տանուտէրերի պատ-գամաւորութիւնները աղ ու հացով: Առաւօ-տեան ժամը 9 և 15 րօպէին մօտեցաւ Արքա-յական գնացքը: Թագաւոր Կայսրը ժամանեց Գրաւաժառանգի, զինւորական, պալատական միմիկտներին, գինեւրալ-աղիւտանտ Հէսսէի, զինաւոր-վերաբոյժ Հիբլի, գինեւրալ-մայօր Մալաօվի և Ֆիլգէլ-աղիւտանտներ ուղեկցու-թեամբ:

ՏԵՆԵՆՏԻՆ («Քէյտ. գործ»): Ունեւորները ապրիլի 30-ին յարձակվեցին գնացքի վրա Նիւ-Չօուանի և Գօսթանցի միջև:

ՆԻՒ-ՉՈՒԱՆ («Քէյտ. գործ»): Ռուսաց ծո-վային թնդանօթածիք «Սիվոլ» մակոյկի թնդ-ընտանիքները և սպառազինութիւնը ուղարկված են Դաշիեհա: Ենպօնացիները յարձակումն այժմ չէ սպասվում, որովհետեւ անձները անանցանքի են դարձրել ճանապարհները:

ՇԱՆՍՍՅ («Քէյտ. գործ»): Ներքին Ման-չուրայի չինացիները չափազանց դժ են այն հեռագրով, որ հապօնացիները ուղարկել են Չինգիի փոխարքային, Մուկոգի, որով հա-ղորդում են, թէ յետ են վերջել Անդունը 29 հաստանի համար, և խնդրում են փոխար-քայից վերականգնել այդպիսի իրանց կառա-վարութիւնը: Չինացիներին առաջարկում են վերադառնալ Անդուն և վերականգնել նախկին ա-ռեւտրական գործերը:

ՀՈՒՄ: Այսի մեծ դքսուհի Պաուլինա Մակ-սէն—Վէյմարեան յանկարծամահ եղաւ:

ՍՈՅՈՒՆ: (Ընդդիմադիր շրջաններից): Պաշ-տօնական աղբիւրների տեղեկութիւններով, մօտ 4000 փաստականութիւն վերադարձել են Մակեդոնիա: Ունեւոր յանձնաժողովները թիթե-լացնում են նրանց վերադարձը: Մինչև այսօր վերադարձածները գնացաւ չին արել: Հաւա-տացնում են, որ Կ. Պօլսի դեսպանութիւննե-րից մի քանիսը կարգադրութիւն են արել, որ վերադարձող փախստականներին պաշտ-պանութիւն ցոյց տան: Դուռնայեան տարա-ձայնութիւնների յանձնաժողովը աւարտել է իր աշխատութիւնները. մնացել են միայն մի քանի վիճելի կէտեր, որոնք կը կանոնաւոր-վին արտաքին գործերի միմիկտութեան կող-մից, իսկ յետոյ կը ստորագրվի առանձին հա-մաձայնութիւն:

ՍՈՅՈՒՆ: («Գօր. Բիւրօ»): Այստեղ հասաւ Պա-րիզի թիւրքաց գեսպան Միւնիլ-փաշան. կա-ռավարչական շրջաններից բղխած լուրերին նայելով, հնարաւոր է, որ նա կը յանձնէ այժմ Ունեւորային գտնվող իշխան Ֆերիսանդի, հրաէր սուլթանի կողմից՝ այցելել Կ. Պօլսը: Իշխանը մտադիր է վերադառնալ Բօլքարիա յունիսի սկզբին:

ՄՈՒԿԻՆԵՆ (Սիւի. թղթ.): Մայիսի 3-ին, հապօնական նաւերը մօտեցան Լեւոսեանի արեւմտեան ծովափին, այն նպատակով, որ միաժամանակ ափ իջնեն Գալիօսե և Սեւիւ-չէն: Դուռն եկաւ, որ դա ցոյց էր և թշնամու նաւերը մտան ծովը:

ԼՕՆԻՕՆ («Քէյտէր»): Լօրդերի պալատը: Կառավարութեան Տիբեռի ապագայ քաղաքա-կանութեան մասին եղած հարցադրումին, արտաքին գործերի միմիկտը յայտնեց, որ կառավարութեան քաղաքականութիւնը մնում է առանց փոփոխութեան: Կառավարութիւնը ամեն հնարաւորը գործ կը դնէ, որ ձեռք բերէ չի-նական կառավարութեան համաձայնութիւնը և աշակցութիւնը, բայց այն որոշումը. թէ մի-չն որ աստիճան չինական իշխանութիւնները ընդունակ են աշակցել Անգլիային և մինչև որչափ ցոյց կը տրվի աշակցութիւն, այդ կարիքն է ամբանից, որ այժմ գտնվում է Լիւսաւում, գրեթէ իբրև գերի: Ինչ վերաբերում է այժման պատերազմական գործողութիւններին այդ կողմից կառավարութիւնը պէտք է որոշ զգուշաւորութիւն գործ դնէ, որպէս զի սկսված գործողութիւնները հասցնէ իր վախճանին Անգ-լիայի համար բարեխաղող և պատուաւոր կեր-պով: Հնդկաստանի գործերի միմիկտը օգնա-կանը յայտնում է. «Մենք կռիւ կը մղենք

Տիբեռի հետ մինչև որ, զէնք ի ձեռին, չը նուաճենք մեր գրութիւնը: Մենք չենք կարող կապել մեզ որ և է պարտաւորութիւններով այն ձեռի մասին, որ կը ստանայ հարցի լու-ծումը»:

ԿՐԵՄԼԵՆՈՒԳ: Նորին Կայսրական Մեծու-թիւնը դուրս եկաւ պերթօնի վրա, ընդունեց զօրքերի հրամանատարի զեկուցումը և իր առջևից բաց թողնելով պահակախումբը հան-դիսաւոր մարշով, բարեհաճեց ընդունել պատ-գամաւորութիւնները: Թագաւոր Կայսրը ար-ժանացրեց պատգամաւորներին իր ողորմած խօսքերին: Վօկզալից Նորին Մեծութիւնը գնաց հրապարակ, ուր կայացաւ զօրանալէս Հեւաւոր-Արեւել գնացող զօրքերի: Փողոց-ները լի են ցնծացող ժողովրդով: Աշակերտ-ները խմբեր—գրօշակներով և ծաղիկ փնջե-րով: Զօրանալէսից յետոյ ժամը 10¹/₂-ին, Նորին Մեծութիւնը մեկնեց Պօլսալա:

ԲՈՒԿՈՒՄԵՆՏ: Ունեւորական պատգամաւո-րութեան արտաքին գործերի յանձնաժողովը ընդունեց արտաքին գործերի նախաշնչը, վառաւորութիւնը յայտնելով Փօլսիօսկուս: Վիճարանութիւնների ժամանակ միմիկտը զարմանք յայտնեց, որ պատասխանաբեր մէջ առված խօսքերը Թիւրքիայի հասցէին գտնված են շատ խիտ և յայտնեց. «Մենք դիմում ենք Թիւրքիային, ինչպէս բա-րեկամներ բարեկամին, երբ առում ենք նրան, թէ Միւրցշտեքի ծրագրի չիւրադրումը, ծրագ-րի, որ մտածված է Թիւրքիային աշակցելու և խաղաղութիւնը պահպանելու նպատակով, պէտք է առաջ բերէ Թիւրքիայի անկումը: Մենք չենք ցանկանում գրաւողական քաղա-քականութիւն ունենալ և չենք մտածում մի-ջամտութեան մասին»:

ԿԻՇՆԵՎ: Անցնալ տարվայ հակահրէական անկարգութիւնների վերջին գործի մասին դա-տաստական պալատը դատաւարեց Դէօր-գիցին և Դէգիւնիւկին 8 ամիս բանտարկութեան, զրկելով առանձին իրաւունքներից. Կօվալիկին և Չեկօվին՝ ծանրվէքքեր հասցրած լինելու հա-մար Բէլլիւշին և Չիլլիւշին—մի տարի բան-տարկութեան. Սիբիւշիւկին և Վիլիւշիւկին՝ Գերշ-Բօլքարիային և Գերշ Լիսանին ապանելու հա-մար—4 տարի տաժանակիր աշխատանքի: Վեց մեղադրողներ 4 հրէաների սպանութեան մէջ արգարացրված են: Քաղաքացիական պա-հանջները թողնված են առանց գոհացման ֆլասների գումարը չապացուցանելու պատ-ճառով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պարիզի նահանգի կառավա-րչը զեկուցեց հեռագրով ներքին գործերի միմիկտին, որ Թագաւոր Կայսրը Պարիզից մեկնելիս, մայիսի 4-ին, Բարձրագոյն հրամա-յի բարեհաճեց յայտնել քաղաքի և արտաք-ձանների ժողովրդին և գաւառներից բոլոր եկողներին Նորին Մեծութեան ամենաողորմած շնորհակալութիւնը կատարելու կարգ պահա-կելու համար, Բարձրագոյն քանկութեան ժա-մանակ Պարիզիում:

ՄՈՒԿԻՆԵՆ: Տղադրական գործի գործիչների ընկերութեան կից, կազմված է օրագրողների առանձին յանձնաժողով, քննելու համար կեն-ցաղական և փոխադարձ օգնութեան հարցեր:

ՉԻՖՈՒ: (Քէյտէր): Չինաստանը շուտով կը յայտարարէ Գիլինանալու, Վէյսան և Չօուցիին քաղաքները Շանդունում՝ բացված օտարազ-գիներին առեւտրի համար:

ԼՕՆԻՕՆ: («Քէյտէր»): Մայիսի 5-ին, հա-պօնական զօրքերի մի զվիզիտ ափ իջաւ մա-յիսի 3-ին Գալիօսիում պատերազմական նա-ւերի թնդանօթներին պատասխարութեամբ: Զօ-րաբաժինը առաջ է խաղում Նիւ-Չօուանի ուղղութեամբ, ուր հապօնացիները սպասվում են մօտ ապագայում:

ՍՈՅՈՒՆ: (Ընդդիմադիր շրջաններից): Այս-տեղի մակեդոնական կօմիտեները ստանում են տեղեկութիւններ, հակասող այն հաւաս-տիւյցներին, թէ վերադարձող փախստա-կանների կողմից հաղապատներ չը կան:

Կ. ՊՕԼԻՍ: Բիթլիկից հաղորդում են, որ 17 հայ գիւղեր ոչնչացրվել են հրդեհով վերջին պատերազմական գործողութիւնների ժա-մանակ Սասունի շրջանում: Անդրանիկի խումբը չէ գտնվել:

ՏՕԿԻՕ: (Քէյտէր): Երկրորդ հապօնական զօրքը փչացրել է երկաթուղու գիծը հինգ տեղ Պօրս-Արաւելից հիւսիս—Ենպօնական կրուստները ապրիլի 22-ի և մայիսի 4-ի ընթացքում 146 մարդ են կազմում:

ՉԻՖՈՒ: (Քէյտէր): Բացի յիշած քաղաքնե-րից, Չօուչէն, Շանդունի գիլանաւոր արգիւնա-բերական քաղաքը, նայապէս կը բացվի ա-ռեւտրի համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գինեւրալ-աղիւտանտ Կու-

րօպատակին հեռագիրը Նորին Մեծութեան. «Մայիսի 4-ին, հապօնական առաջապահ խում-բը, որ մինչև մայիսի 1-ը գրաւում էր Սեւ-խախիւսեան անցքը և Կանդապուզա գիւ-ղը, 34 վերստ տեղ հեռու դէպի հիւսիս-արեւմուտը ձինխուսանչէնից, շարժվեց դէպի Սիլիւշտանը, Բաղաօսէ գետի ձախ վտակի հովտում: Դիանդօլում կանգնած է մի-փոքր հապօնական զօրախումբ: Սիւսանը ա-ռաջվայ պէս գրաւված չէ հապօնացիներից. նրանց ուժեղ խուզարկու խումբը կանգնած է Սիլիւշտից դիմաց, Սիւսանից 15 վերստ դէպի հարաւ-արեւելք: Ունեցած տեղե-կութիւնների համաձայն, Դաւաշանը դա-տարկել են հապօնացիները և նրանց զօ-րախմբերը կանգնած են—Լուսնօրի դիմաց 600 հոգի և Սաղիցալայուրի դիմաց 300 հոգի հետեակ և հեծկալօրքը, ռուսաց թնդանօթի նրանց մնացած ուժերը հեռացան ձինխուսա-չէնի ուղղութեամբ: Ինքայինում, ձինխուսա-չէնից հարաւ-արեւմուտը 16 վերստի վրա, կանգնած է մի զօրախումբ 5000 հոգուց բաղկացած: Երրորդ օրն է, որ եղանակը ան-ձեռնային է և ճանապարհները փչանում են»:

Գինեւրալ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին մայիսի 5-ին. «Մայիսի 4-ին, առա-ւօտեան, հապօնական առաջապահ զօրքերը, որոնք կանգնած են Լեւոսեան գլխաւոր ճա-նապարհի վրա. Տիւնմենցի մօտ, նահան-չիցին դէպի Չանգալին անցքը և յետոյ դատարկեցին Սիլիւշտանը, մօտենալով ձին-խուսանչէնին: Ձինխուսանչէնի շրջականե-րում հապօնացիները կառուցանում են ամ-րութիւններ. յայտնված է հապօնական զօրա-խմբի բացակայութիւնը, որ առաջ գրաւում էր Սիւսիւսեան գիւղը 15 վերստ հիւսիս-ա-րեւմուտը Դաւաշանից, որը նոյնպէս հապօնա-ցիները դատարկել են: Նրանց փոքրիկ զօրա-խմբերը կանգնած են Ունեւորականի և Լուսնա-խօի դիմացից իջնալէս և Սաղիւշայուզում: Փոքր հապօնական խուզարկու խմբեր յայտնվում են հրեմն և Սիլիւսի շրջականերում:

6 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Правит. Вѣстникъ» լրա-գրում ապօրին է. «Թագաւոր Կայսրը հաճեց այցելել Կօղիչիսկի միմիկտները և մայիսի 5-ին, առաւօտեան ժամը 9-ին, հաճեց ժամա-նել Կրեմլնուգ: Վօկզալում բախտ ունեցան մատուցանել աղ ու հաց պատգամաւորու-թիւնները՝ տեղական ազնուականութեան, քա-ղաքային վարչութեան, գեմաւոյօյի, շինական տանուտէրերի և մէջնակների հասարակութեան: Տեղական հրէայ համայնքի պատգամաւորու-թիւնը մատուցեց թօրա: Կայսրանից Նորին Մեծութիւնը Գրաւաժառանգի հետ կառքով հա-ճեց գնալ 34-րդ և 35-րդ գնդերի կայանը: Հանդիսաւոր մարշից յետոյ օֆիցերները առաջ կանչվեցին և արժանացան Նորին Մեծութեան ողորմած ողջկերթի խօսքերին և Թագաւոր Կայսրը յանձնեց գնդերի հրամանատարներին պատկերներ Թագուհի Կայսրուհու և իր կող-մից, և յետոյ, ձին առաջ բռնելով զօրքի մէջ-տեղը, Նորին Մեծութիւնը դիմաց իւրաքան-չիւր բառապիտին, առանձին հաւաստիք յայտ-նելով, թէ հետեւելով գնդերի առաջին աւան-դութիւններին և Շիվալայի փառաւոր պաշտ-պանութեան օրինակին, նրանք առաջիկայ դժուար արշաւանքում կը կտարին թշնամու յամառութիւնը և ցանկացաւ նրանց վերա-դառնալ անվնաս հայրենիք: Դրանից յետոյ Թագաւորը մի անգամ ևս անցաւ բրիգադների առջևից և կանչելով այն զինուորներին, որոնք գինեւրական շքանշաններ ունէին, հաճեց ու-ղորմածաբար հարցուփորձ անել նրանց: Թա-գաւոր Կայսրը մայիսի 5-ին, օրվայ ժամը 12 և 40 րօպէին, Կօղիչիսկի կայարանում հաճեց աղ ու հաց ընդունել տեղական ազնուակա-նութեան, գեմաւոյօյի, գեմաւոյային պետերի և շինական տանուտէրերի ներկայացուցիչնե-րից: Ժամը 2-ին, Պօլսալա հասնելով, Նորին Մեծութիւնը հաճեց ընդունել Պօլսալի ազ-նուականութեան, գեմաւոյօյի, քաղաքային վար-չութեան, վաճառականների և մէջնակների հա-սարակութիւններին, շինական տանուտէրերի և գիւղացիների պատգամաւորութիւնները: Բոլոր այդ պատգամաւորութիւնները աղ ու հաց մատուցին, իսկ հրէական հասարակութեան պատգամաւորութիւնը՝ ա. գրքի ծրարները: Վօկզալից Թագաւոր Կայսրը հաճեց գնալ տա-ճար, ուր կատարվեց մաղթանք: Տաճարից Նորին Մեծութիւնը ուղղվեց Սպասկի հին և կեղեցիկ, որ նորոգված է Պետրոս I կայսրի ժամանակ, իսկ այդտեղից դէպի այն յուշադ-ճանը, որ կանգնեցրված է այն տեղում, ուր կուրց յետոյ հանգստացաւ Մեծն Պետրոսը: Յուշարձանը տեսնելուց յետոյ Նորին Մեծու-

բակի ամբակոծում էր Պորտ-Արտուրը, եսպո-
նացիները մի և նոյն ժամանակ ակի իջան,
գիտաւորութիւն ունենալով յարձակում գոր-
ծել բերդի վրա միաժամանակ ցամաքից և
ծովից: Տօկիոյց ստացված ճշգրիտ տեղեկու-
թիւնները համաձայն, կոտոր-ծովապետ Նա-
շու դա խեղդիկ «Մատցուօրի» վրա, որը ծո-
վապետական նաւ էր. ծովապետը փորձված
օֆիցեր էր, որին շատ բարձր էին գնահատում:
—Վէյլալէից հաղորդում են, որ բրիտանական
մարտանաւային «Էսպիէլ» նաւակը դուրս ե-
կան Նիւֆոնլանդից, այդ բաղադր գրաւել էին
հապօնայինները, որոնք եկել էին Գայթօնից:
ԶԻԿԱՅՕ: (Րէյտ. գործ.): Զիֆուից հեռա-
գրում են, որ հապօնական «Գաուս» կրէյ-
սէրը քննութեան ենթարկեց «Փալան» պա-
տուիրակ նաւը, որը գնում էր բաց ծովում
Գայթի մօտ: Օֆիցերներն ասում են, որ ռուս-
ները գործ են դնում չինական դժոխական
հապօնական նաւատորմի ճանապարհի վրա
ակաւները դնելու համար: Եւապօնական նաւա-
տորմը ջրանոց արեց մի քանի դժոխական
և մէկ բաշղո նաւ, որոնք դարձում էին
ակաւներ: Ակաւները անկարգ դասաւորու-
թիւնը ստիպում է հապօնական նաւատորմին
հեռու պահել իրան ակից: Մի քանի նշան-
ներ ցոյց են տալիս, հապօնայինները Պորտ-
Արտուրի մօտ դարձել են մի ջրանաւակութեամբ
ակաւներ: Հոսանքից տարված շատ ակաւներ
լողում են ամբողջ ծոցում:

10ՆԴՕՆ: (Րէյտ. գործ.): Շանգայից հա-
ղորդում են, որ 10,000 ռուս զորքեր ուղարկված
են Գայթօն: Նպատակ ունենալով կանգնեց-
նել հապօնական զորքի շարժումը մինչև որ
ստանան կոնժուգացիան Լեաօնանի ամրութիւն-
ները:
ՏՕԿԻՕ: (Րէյտ. գործ.): Ստացված գե-
ղացուհիների համաձայն, հապօնայինները մայի-
սի 3-ին զբաղեցին Գայթօն, որը գտնվում է
30 մղոն տեղ դէպի հարաւ Նիւ-Չոնանից:
Ռուսները նահանջեցին:
ՏԵՆԵՉԻՆ: (Րէյտ. գործ.): Գայթօնում
գրաւելուց առաջ տեղի ունեցած լուրջ կռիւ:
10ՆԴՕՆ (Րէյտ. գործ.): Տեանցիկից հա-
ղորդում են, որ 70,000 ռուսներ գնում են
Պորտ-Արտուրը փրկելու: Այդ պատճառով հա-
պօնայինները շտապում են յարձակում գոր-
ծել: Եւապօնայինների առաջապահ գիծը եօթն
մղոնով հեռու է կանգնած ռուսաց մարտիկոց-
ներից: Եւապօնայինները գնում են վեց դիւ-
մանոց ծովային թնդանոթներ պողպատե ա-
նիւնների վրա, մտադրվելով ստիպել ռուսաց
բաւարճանները լռելու:

ԲԵՐԼԻՆ: «Նախօրեայ Ցայտունգ» լրագրի
տեղեկութիւններով «Մատցուօրի» զբաւաւորի
սպասաւորող մարմինը բաղկացած էր 741
մարդից, և որովհետեւ ակաւնաւները ազատել
են միայն 300 հոգի, ուստի խեղդիկ են 441
հոգի «Քոչիմօ» զբաւաւորող կրէյսէրը շատ
թանկագին էր և ամենատարագնէրը հապօ-
նական կրէյսէրներից: Նա ժամը մօտ 23 ծո-
վային մղոն էր կատարում: Սպասաւորող մար-
մինը բաղկացած էր 383 մարդից և որովհետեւ
ազատվել են միայն 90-ը, ուրեմն մնացած
293-ը խեղդվել են: Եւապօնայինները մէկ օ-
րում կորցրին 739 ծովազնացիներ:
10ՆԴՕՆ (Րէյտ. գործ.): Համաձայնների
պալատ: Կոմս Պէրսի, արտաքին գործերի
մինիստրի օգնականը յայտնեց, որ չինական
կառավարութեան արած պաշտօնական հաղոր-
դագրութիւնը՝ Լիաուսէի դէմ ենթադրվող յար-
ձակման առիթով, անհրաժեշտ չէ համարված:
ԲԵՐԼԻՆ: Համբուրգ գնաց հարաւ-արեւմտեան
Աֆրիկայի համար սահմանված զորախումբը,
բաղկացած 75 օֆիցերներից և 500 զինուոր-
ներից: Աւարտվեցան գերման-նիւթերաւորա-
կան և ռուս-բուլղար-բոլղարական հայային ա-
ռւարի ներկայացուցիչների խորհրդակցու-
թիւնները և վերջնականապէս հաստատված
են գերման-նիւթերաւորական դաշնագրի որո-
շումները վերաբերմամբ մի քանի բեռների,
Ա. և Ա. ձողեւան ծովերից ու Դանուբից:

ՍՊԱՐԱԿԻՐ՝ ԱՆԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՍԱԿԱՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Բ Ժ Ե Կ Ա Պ Ե Տ
Գեորգ Թադեոսեան
Այս ամառ ևս կընդունի հիւանդներ Կովկա-
սեան հանրային ջրերում: Հասցէն՝ Զեսենտուկի,
главы. Курсовая ул., домъ Квартовичной.
(Կ. Տ. Կ.) 4—10

Հոյս տեսաւ № 11.
Վ. Փ ա լ ի ա գ ե ա ճ ի
ՄԵԾ ՓԱՅՆՔ
ԵՒ ԱՌԻԻԾԻ ՄԱՀԸ
(Զրոյցներ)
Գինն է 3 կոպէկ:
Գումարով գնողներին 30% զեղջ. ճանապար-
հածախսը նրանց վրա:
Դիմել Թիֆլիս (Пушкинский пассаж)
Геворку Бабурапу.
Շուտով լոյս կը տեսնի
Նոյնի ՊԱՅՏԱՌԻ ՀՈԴԻՆ և ԱՆԿԵՂՉ ԸՆԾԱՅ
1—1

Հ Ր Ա Ի Է Ր
Կիրակի, մայիսի 9-ին, առաւօտեան 10 ժա-
մին, ս. պատարագից յետո՛ւ, Կարապետ
Եկեղեցում լինելու է ծխականների ընդհանուր
Երկրորդ և վերջին ժողով՝ երեցփոխի նոր ընտ-
րութիւն կատարելու համար: Ուստի արանով
յարգողաբար յայտնում եմ նոյն եկեղեցու
պ. պ. ծխականներին որոշած օրը և ժամին
շնորհ բերել լիեղեղ եկեղեցին՝ ժողովին մաս-
նակցելու:
Թիֆլիսի հայոց եկեղեցիների և մասի
գործակալ՝ Դանդ. քահ. Մամիկոնեանց
1—2

Հ Ր Ա Ի Է Ր
Մայիսի 9-ին, կիրակի առաւօտեան ժամը
12-ին, Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցումը
ժողով է լինելու, նոր երեցփոխ ընտրելու,
ուստի արանով մեծապատիւ պ. պ. ծխերն ա-
ռաջին անգամ հրաւիրվում են ներկայ լինել
լիեղեղ եկեղեցումը ընտրութեանը մասնակ-
ցելու:
Գործակալ ա. մասին Թիֆլիսի Գրիգոր աւագ
քահանայ Մանգալուհի:
2—3

Հոյս տեսաւ
Երոզեալ հատարածուար
Ս. Ս. ՄԵԼԻՔ-ԱՂԱՍԱԿԱՆ
«ПРАКТИЧЕСКОЕ РУКОВОДСТВО
для составления бумаг по деламъ Граж-
данскаго Судопроизводства въ Закавказ-
скомъ Краѣ».
Գինն է 1 ռուբլի:
Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական,
Նիւդեկէի և Գուտտեկերէզ գրաւաճառանոց-
ներում և Հելլինական դիմողները՝ (прис. повѣр.
С. С. Мелик-Адамов. Тифлисъ, Межевая
ул., д. № 40), 10 օրինակից աւելի պահանջով
ստանում են 10% զեղջ և ճանապարհածախս
չեն վճարում: (Կ. Տ. Կ.) 8—10

Հոյս տեսաւ
ՊԵՐՃ ՊՈՇԵՆՆԵՐ
Հ Ա Յ Ի Խ Ն Դ Ի Ր
վէպը, կրկնուրդ տպագր., գինն է 1 ռ. 50 կ.
Ճանապարհածախսով 1 ռ. 70 կ.
ՍՕՍ ԵՒ ՎԱՐԳԻԹԵՐ
վէպը, կրկնուրդ տպագր., գինն է 1 ռ. 20 կ.
Ճանապարհածախսով 1 ռ. 45 կ.
Տպագրվում են՝ Պոշեանի «Շահէն» և Տ.
Եժի «Լուսաղէմին».
Դիմել՝ Баку. Книжн. маг. С. Д. Арутю-
НОВА.
(ա. օ) 10—25

CREME SIMON

(Կրեմ-Սիմոն) զեղեցիկ հոտ ունեցող ար-
տադրութիւնը, որ երբեք չի փչանում և
պնդացնող ու փափկացնող յատկութիւն-
ների հետ միասին առաւելութիւն ունի
պահպանելու դէմը գոյնի չնորհալիւ-
թիւնն ու կրիտաւարական թարմութիւնը:
LA POUDRE SIMON
(Պուդր Սիմոն) La savon á la Creme Si-
mon (Օճաւ Սիմոնի) ունին նոյն հոտը և
լրացնում են նրա զարմանալի յատկու-
թիւնները J SIMON 59 Faubourg St.
Martin Paris. Մաս-մաս վաճառվում է
վարսակներով, պարֆյուրներով և դե-
ղադրոնների մօտ:
(Метель) 2. 11—15



Յ Ե Ր Ե Կ Վ Ա Յ
ՀԱՆՐԱՄԱՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒՄՆԵՐ
Թիֆլիսի Հակա-պիտոյական ընկերութեան Հա-
լարարի բաժանմունքի
ՄՈՒՐԱՇԿՈՅԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Կիրակի, մայիսի 9-ին
Հ Ա Յ Ի Խ Ն Դ Ի Ր
Բարեհաճ մասնակցութեամբ դերասան Ա Ա Օ-
Խ ա Ր ա Վ Ե ա ճ ի
Կ ը ն Ե Ր Կ Վ յ ա ջ Ե Ն
ԹՈՒՂԹ ԽԱՂԱՅՈՂԻ
Կ Ե Ա Ն Ք Ը
Դրամա 5 գործ. Թարգմ. Պատկանեանի:
Մասնակցում են.—Տիկ. Սօֆիա, օր. օր. Հայ-
կունի, Մարգարիտ, պ. պ. Աննա-Մարգարէ,
Գարսեան, Գրիգորեան, Դոշոյան, Լաւրա-
բեան, Կիրակոսեան, Նազարեկեան, Մարեան,
Սողոմոնեան և ուրիշներ:
Տեղերի գինը 5-ից մինչև 40 կոպէկ:
Սկիզբն է 11 ժամին առաւօտեան:
Տօմարները վաճառվում են Թատրոնի կա-
սայում ներկայացման օրը, ժամը 9-ից: Սաղա-
միջոցներին կը նուագէ երաժշտական խումբը:
1—2
Բէժիսօր՝ Վանշիր

Վերսիսեան դպրոցաւորտ և հինգ տարի ծը-
խական միջոցաւորտ ուսումնարանում մայրինի
լիզու դասախօսած մի երիտասարդ
Հայ ուսուցիչ
ցանկանում է նոյն կամ վերակազմութեան պաշ-
տօնները ստանձնել: Դիմել գրաւոր՝ Учителю
Хачатур Тер-Енобянцу մինչև յունիսի 5-ը
այս հասցեով—Армянскѣ (Крымѣ), Іюль, армян-
скіе Тифлисъ, редакция „Мшакъ“.
(8, 10, 15) 1—3

Հալարարում, Արարեսանի Թատրո-
նում նշանակված ամսոյ 8-ին ներկայա-
ցումը յետաձգվում է մի դերակատարի
հիւանդութեան պատճառով և կը կայանայ
ամիս 12-ին, չորեքշաբթի օրը: 1—1

Հ Ր Ա Ի Է Ր
Կիրակի, մայիսի 9-ին, առաւօտեան ժամը
11-ին նշանակված է Կաթողիկէ ս. Գեորգ
(Մէլլանի) եկեղեցու ծխականների ընդհանուր
ժողով հետեւալ հարցերի համար. 1) երեցփո-
խի հաշիւը 1902 թ. յուլիսի 1-ից մինչև 1904
թ. յունիսի 1-ը: 2) եկեղեցում նորոգու-
թեան հարցը: 3) Նախկին երեցփոխ Գրի-
գոր Բայանդուրեանի վրա մնացած գումարի
պահանջները (հարցը և 4) գանադան տնտեսա-
կան ինյուրները:
Երեցփոխ Յովսէփ Ամիրխանեանց
(2. Կ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Կիրակի, մայիսի 9-ին, 1904 թ.
պ. Գ. ՄԻՐԱՂԱՆԵՐ
մասնակցութեամբ հայ դեր. խմբի անդամները
և սիրողների կը ներկայացնեն
ՔԱՆԴԱՍԾ ՕԶԱԽ
Կօճ. 3 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի:
Մասնակցում են՝ տ. տ. Սաթկինի Չմէկեան,
Վարդուհի, օր. օր. Հայկանուշ, Արիստոման,
Բէլլիշանեան. պ. պ. Միրաղեան, Տէտ-Դաւ-
թեան, Մամիկոնեան, Երիցեան, Պաշիկեան,
Ակորջանեան և Սաֆարեան:
Սկիզբն է երկուցեան 8 1/2 ժամին:
Տեղերի գինը 2 ռ. 50 կ. մինչև 50 կ.
Տօմարները ծախվում են ժողովարանի շէն-
ցարի մօտ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԳՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
1904 թ. մայիսի 9-ին
Ի նպաստ տեղական ռուս և վրաց լրագրիների
ճանապարհ հիւանդ աշխատակից՝
Դ. Ի. ԿԵԶԵԼԻԻ
(«Չօր», «Novus», «Դաւիթ Սոսլանի» և այլն)
հանելով 10% զուտ եկամուտից յօգուտ Հե-
նար Սրեկերի սպանված և վիրավորված զին-
ւորների ընտանիքներին, Արտիստական ըն-
կերութեան սիրողները, Ս. Ս. Բաստաովի գե-
կավարութեամբ և վրաց արտիստների խումբը
կը ներկայացնեն:
I
«СВАДЬБА КРЕЧИНСКАГО»
Կօճ. 3 գործ., հեղ. Սուխով-Կօթիլիսի:
II
«У Мирового»
պատկերներ 1 գ., վրացերէն լեզուով, հեղ. Դ.
Ի. Կեզելի:

Բասպիլեկի դերը կը կատարէ Ս. Ս. Բաստաով:
Մասնակցում են. տ. տ. Մ. Բ. Գալլի, Վ. Վ.
Յօն-Շուրման և Գարուհի-Ցաղարէլի, պ. պ.
Ս. Ս. Բաստաով, Վ. Արաշիճէ, Ի. Գ. Կօթե-
կով, Ֆ. Վ. Բիլիզով, Ե. Ն. Մակարով, Ա. Դ.
Ամալին, Դ. Ե. Եֆիմովիչ, Բ. Պ. Նեժդանով,
Ա. Ա. Վիշնեակով և ուրիշներ:
Տեղերը դրամատիկական ներկայացումներ
գնեն ունեն: Տօմարները վաղորօր կարելի է
ստանալ «Тифлисский Листок» լրագրի խմբ-
արարութեան մէջ առաւօտեան 9 ժամից մինչև
3 ժամը և երկուցեան 7-ից մինչև 9 ժամը,
իսկ ներկայացման օրը Թատրոնի կասալում:
Սկիզբն է երկուցեան 8 1/2 ժամին:

Ս. Պետերբուրգի մերկնայական
արդիւնագործութեան ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵԻ, ԿԱ-
ՆԱՅՏ, ՏՂԱՄԱՐԴ-ԿԱՆՏ և ԵՐԵՒԱՆԵՐԻ
ԿՕՑԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխօղներ ու սանդալներ
կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդր-
կովկասի միւս քաղաքներում ՄՄԵՆԱԼԻ
վաճառատներում:
ФЕБРИНОЕ КЛЕЙМО
С. ПЕТЕРБУРГ.
Խ ն գ ր Վ ու մ է ուշը դարձ-
նել ֆաբրիկայի նշանի վրա:
ԼԵՕՊՈԼԴ ՆԵՅՇԵԼԼԷՐ
Աւետարական տան պահեստում կայ ընտրութեան համար
մեծ քանակութեամբ ռուսական և արտասահմա-
նեան արդիւնագործութեան
ԿԱԶՈՒԵՂԵՆ ԵՊՐԱՆՔՆԵՐ
Տէլեֆօն № 346. 6—100 Երեւանեան հրապարակի վրա:

